



ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 26 ՄԱՅԻՍ, 1929

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՍԼՊԷՔԻ ԺՈՂՈՎԷՆ ՎԵՐՋ

ՊԱՍԼՊԷՔԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱ-
ԿՈՒԹԵԱՆ ՀՍՄԱԺՈՂՈՎԷՐԻՆ մէջ գործու-
րաւիր և ակնածաւիր ուշադրութեան ա-
ռարկայ դարձան Հայ Առաք. Եկեղեցւոյ
չոյժ մը հեղինակաւոր կղերները, Գեր.
Տ. Բարզէն Եպս. Կիւլէսէրեան եւ Գեր.
Տ. Արտաւազդ Վրդ. Սիւրմէեան, որոնց
արտայայտութիւնը կրօնական դաստիա-
րակութեան ժառին, Հայ Առաք. և Հայ
Աւետ. եկեղեցիներու և միութնարական
կազմակերպութիւններու փոխյարաբե-
րութիւններուն մասին մասնաւոր նկա-
տողութեան արժանի են, առաջինը ըլ-
լալով խմբագրապետը «Սիւն»ի, միակ
պաշտօնաթերթը Հայ Առաք. Եկեղեցւոյ,
իսկ երկրորդը ըլլալով առաջնորդը ա-
մենահոծ Հայութիւն ունեցող կնգրոնի
մը, Հայաստանէ դուրս:

ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՆ արդար իրա-
ւունքն ունի զովեստի, ինչ որ Բարզէն
Սրբազան կատարից ձեռնհասօրէն, ան-
զին զոհողութիւններով Աւետարանի
լոյսը Արեւիկէի մէջ պահած ըլլալուն հա-
մար: Հայ եկեղեցական պատմութիւնը
տեւական մարտիրոսապրութիւն մ'է ծայ-
րէ ծայր: Կեանքէ դուրկ չի կրնար

նկատուիլ այն եկեղեցին որ կրցած է իր
գաւազներուն թէպէտ անգրագիր և ազէտ
բայց հաւատարիմ և հաւատալիր—ներ-
շնջել նահատակութեան ոգի, զոր ան-
կարող են ներկայիս շատ մը լուսաւոր-
եալ եկեղեցիներ: Բարզէն Եպիսկոպոս
խոր տպաւորութիւն ձգեց ժողովական-
ներուն վրայ պատմելով հայ մարտիրո-
սապրութենէն հերոսական զրուագ մը,
1895ի եղեռնէն քաղուած:

ՀԱՅ ԱՌԱՔ. ԵՒ ՀԱՅ ԱՒԵՏ. ՊԱՏ-
ՈՒԻՐԱԿՆԵՐԸ առիթը ունեցան իրարու
քով գալու մտերմական արտակցութեան
համար: Ան կ'ի գծ արտայայտութիւններ
եղան երկուստէք, որ առաջին անհրա-
ժեշտ պայմանն է իրար հասկցողութեան
և գնահատումի, կոսկածներն եւ նա-
խապաշարումները փարատելու համար:
Շատ բարերար ազդեցութիւն մը պիտի
ունենայ այսպիսի հաւաքոյթներու պար-
բերական կրկնումը, նոյն ազգի երկու
քոյր եկեղեցիներու փոխյարաբերու-
թիւններուն և ընդհանուր հայ նկարա-
զրին վրայ, արծարծելով զործակցու-
թեան ոգին:

ԿՂԶԻՍՑԵՍԻ ԿԵԱՆՔԻ և ինքն իր մէջ
ամփոփուած զործունէութեան ա'լ պէտք
է վերջ մը տալ, եթէ կ'ուզենք իբրեւ
քրիստոնէական եկեղեցիներ մեր կոչու-

մին հաւատարիմ ըլլալ եւ գոյութեան իրաւունք մ'ունենալ: Այն եկեղեցին որ միշտ իրեն համար կ'ապրի, իր պատհանէն դուրս չ'իլլեր, պատգամ մը չունի իրմէ զրօններուն տալիք, եւ միշտ պաշտպանողականի վրայ կը մնայ, զատապարտուած է ամուլ կեանք մը ունենալու, տկարանալու եւ կորուստի: Հայ Աւետ. եւ Հայ Առաք. եկեղեցիները պէտք է լաւ ըմբռնեն այս ճշմարտութիւնը, որ կը խորհրդէ թէ կենսական բնոյթ մ'ունի ներկայիս երկուքին համար ալ: Հայ Աւետ. եկեղեցին ինքն իրեն համար կանգուն չի կենար եւ պէտք չէ որ կենայ, անոր նպատակն է հոգեւոր ազգակ մը ըլլալ, բարձրացնելով Հայ նկարագիրը Քրիստոսի մէջ յայտնուած կեանքի մակարդակին վրայ: Միւս բոլոր բաները կը մնան երկրորդական աստիճանի վրայ: Հայ Առաք. եկեղեցին, տոհմային բոլոր սրբութիւններուն, ցեղային մշակոյթին եւ ժառանգին աւանդապահը ըլլալով հանդերձ եւ ատկէ աւելի պէտք է կարենայ հայ սիրտերուն մէջ քրիստոնէական սրբութեան, հոգեւոր լոյսի կայծերը հրահրել, հոգեւոր պատգամ մը տալ ոչ միայն իրեն այլ նաեւ իրմէ զրօններուն: Անձնակեցրոն կեանքը մահացում է: Ուստի այս երկու քոյր եկեղեցիները, դուրս ելլելով իրենց նեղ շրջանակներէն, պէտք է գործակցին հայ կեանքը բարձրացնելու հոգեւոր գործին մէջ:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՆԵՐ ԵՆ առաջին եւ լաւագոյն միջոցը գործակցելու եւ նոյն հոգին յառաջացնելու համար: Շատ դիւրութեամբ կարելի է համանման ծրարագիրներ մշակել, երկու եկեղեցիներու դպրոցներուն մէջ ալ կիրարկուելու համար: Բիշօֆ արդէն հրատարակած ունի եւ մտադիր է հրատարակելու այսպիսի դասագիրքեր, — Սկանակներու համար 6 — 8 տարեկան, հեղինակ Միս Մու-

տի, Թրգ. Օր. Ա. Պատուրեան, նորատիներու համար (9—12 տարեկան), պատանիներու համար (13—16 տարեկան), պատրաստուած մասնաւորապէս հայերու համար Միս Ճէնէսի կողմանէ, Թարգմանուած եւ հայերու յարմարցուած Պր. Բիւզանդ Եղիանանի կողմանէ, երիտասարդներու համար (17—24), հեղ. Տր. Ուէսթըն, վերստին գրուած Վեր. Փարթբիճի կողմանէ եւ Թարգմանուած Պրն. Ն. Սասթճեանի կողմէ: Ասոնց մէջ էն յաջող կերպով հայացուածն է Պրն. Բ. Եղիանանինը, որ այնքան ճոխ եւ յարմար կերպով պարզարուած է հայ կեանքէ առնուած գրուագներով: Հայ Աւետ. եկեղեցիի Կիրականօրեայ Դպրոցները մեծապէս պիտի օգտուին այս դասագրքէն, ինչպէս նաեւ միւսներէն, միջավայրը հայացնելու եւ հոգեւոր ճշմարտութիւնները պզտիկներուն աւելի մատչելի եւ ազդեցիկ ընծայելու մէջ, բան մը որ մինչեւ հիմա անտեսուած է Աւետ. Դպրոցներում:

Շատ բարեպատեհ պարագայ մըն է Հալէպի մէջ Պրն. Լիւոն Զինեանի ներկայութիւնը, որ մասնաւորապէս պատրաստուած է կրօնական դաստիարակութեամբ զբաղելու եւ հոս կը գտնուի Հայ Առաք. եկեղեցիին մէջ Կ. Դպրոցներ կողմակերպելու համար: Եւ երբ այս դպրոցները կազմակերպուին Հայ Առաք. եկեղեցիին մէջ, շատ զիւրու-թեալմբ կարելի է միջոցներ ստեղծել, ընկերային ժամանցի, տօներու, փոխադարձ անցնելու նպատակով երկու եկեղեցիներու դպրոցներուն միտակց գալուստ համար: Այս ամբողջը պիտի սատարէ քրիստոնէայ հայ սիրտունի մը յառաջ բերելու, գործակցութեան, կողալրութեան, եւ նոյն հայ ոգիով տոգորուն:

ՅՕԴՈՒԱՍՆԵՐ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍԷՐ

Տարօրինակ չէ՞ որ երկու իրարու ան-
ծանօթ էակներ, տարբեր միջավայրի
մէջ մեծցած, թերեւս տարբեր մեթո-
ներով, որոնք երբեմն աշխարհի ամենէն
հեռաւոր անկիւններէն կուզան, տակաւ
առ տակաւ եւ կամ յանկարծ զօրաւոր
քարշաղուծիւն մը կ'զգան խորհրդաւոր
ուժէ մը մղուած, որը մտածել կուտայ
ձգողութեան օրէնքին: Անոնք կը վար-
ժուին զիրար ճանչնալու, յետոյ՝ զիրար
սիրելու, եւ, ժամանակ մը նշանուած
մնալէ վերջ, որ ատեն կը խորունկնայ ի-
րենց փոխադարձ վստահութիւնը, ա-
նոնք կը միանան ամենասիրտ եւ ամե-
նամտերիմ կերպով, մարմինով, հոգիով
ու միաբով, եւ կը կազմեն աշուհհետեւ
միմիայն մէկ անձ. կարծես անոնք այլ-
եւս ձուլուած են իրարու հետ, մէկզմէ-
կու շուրջ կը դառնան, մէկուն շահը
միւսինն ալ է, միեւնոյն խորհուրդը ու-
նին, իւրաքանչիւրին մեծագոյն երջան-
կութիւնը միւսին երջանկութեան հա-
մար աշխարհին է: Եւ քանի որ յաճախ
բնութեամբ իրարմէ շատ տարբեր են ա-
նոնք, ամբողջ աշխարհութիւն մը կայ
կատարելիք, զիրար աւելի լաւ ճանչ-
նալու եւ ատով զիրար ալ աւելի սիրելու
համար: Մարդ մէկէն լաւ ամուսին մը
չըլլար, հապտ դպրոցէ մը կ'անցնի ինք,
ուր կայ շատ մը փոխադարձ յարգանք,
հանգուրժանք, գրկանք, նայնիսկ զու-
հաբերութիւն, այնքան՝ որքան զուր-
գուրանք, եւ բնականաբար սէրը ստէպ
զատն փօրձերու կ'ենթարկուի, բուն
իսկ այդ տիրող մտերմութեան երեսէն:
Մինչ թերեւս կը կարծէիր թէ հրեշտակի
մը հետ ամուսնացած ես՝ շատ չանցած
կը տեսնես որ ցնորք մըն է այդ եւ զի-
մացինդ ալ մարդկային էակ մըն է, այ-
սինքն մէկը որ իր բարեմասնութիւննե-
րուն եւ սոսքինութիւններուն հետ, իր

թերութիւններն ու տկարութիւններն
ալ ունի:

Ինչպէ՞ս ընել որ ամուսնական սիրոյ
փորձը երթալով աւելի խորունկ խան-
դաղատանքի մը հասնի, ե ո՛չ երբէք ամու-
սնալու ծման: Քանզի աւա՛ղ, հարկ
է խոստովանիլ թէ ամուսնալուծումը
այսօրուան օրակարգի նիւթն է, ոչ մի-
այն գրքերու, վէպերու, ե թատերգու-
թիւններու գէջ, հապա երկիրներու մե-
ծամասնութեան կեանքին ո՛վ: Թերթի
յօդուածագիր մը վերջերս կուտար հե-
տեւալ թիւերը որոնք տխրօրէն նշանա-
կալից են:—

Քանատացի մէջ 161 ամուսնութիւն-
ներու Մեծն Բրիտանիայի մէջ՝ 96ի, Եռեւ-
տի մէջ՝ 33ի, Գերմանիոյ մէջ՝ 24ի, Ֆրան-
սայի մէջ՝ 21ի, Զուիցերիայի մէջ՝ 16ի,
Ճարմինի մէջ՝ 8ի, ե Միացեալ Նահանգնե-
րու մէջ՝ 7ի դէմ 1 ամուսնալուծում կը
հաշուեն:

30 տարիէ իվեր կացութիւնը շատ
ծանրացած է: Այս մասին աշխարհի ամե-
նէն զէշ երկիրը խորհրդային Ռու-
սաստանն է: 1928 տարւոյ աւաջին
հինգ ամիսներու միջոցին փեթրոկրատի
մէջ տրձանագրուած են 9681 ամուսնու-
թիւններ եւ 7255 ամուսնալուծումներ:

Այս բանին դարմանը պէտք է սկսիլ
երիտասարդութեան ժամանակէն, պէտք
է մէկը յարգէ ինքզինքը որպէսզի ար-
ժանի ըլլայ օր մը իր լծակցին յարգան-
քին, ամուսնութեան ատեն իր աւել-
ցուքները չբերէ անոր, ե չպահանջէ ան-
կէ երբէք ինչ որ ինք չկրնար տալ. ըսել
կ'ուզենք, մաքսոր երիտասարդութիւն
մ'ունենալ, որու ընթացքին յաղթական
պայքար մղելու է մաքուր ե ժուժկալ
վիճակով արժանանալու համար պսակի
օրուան: Յետոյ ամուսնանալ՝ Աստու-
ծոյ հաճութեան վստահութիւնը ունե-
նալով, քանզի Աստուած մեզմէ աւելի
ազէկ զիտէ ամուսնացեալներու մէջ
հաշտեցնել սրտի պահանջները բանա-

կանութեան պահանջներուն հետ: Ու չինչ աւելի ցաւալի է քան տեսնել մարդիկ որոնք Աստուծոյ օրհնութիւնը կը խնդրեն իրենց ամուսնութեան վրայ, մինչ իրենց նշանաւորին ատենը այդ բանը մտքերնուն իսկ չէին անցուցած: Իբր թէ ըսել ուզէին Աստուծոյ. «Մենք առանց քեզի որոշեցինք ամուսնանալ. ահա՛ անոր համար է որ Բու կամքդ չի հարցուցինք. բայց հիմա վստահ ենք որ Դուն պիտի վաւերացնես մեր որոշումը և պիտի օրհնես մեր միութիւնը»: Աստուծոյ հետ վարուելու ինչ տարօրինակ կերպ:

Երբ այլևս ամուսնացած են, պէտք է որ լծակիցներու մէջ ամենակատարեալ հաւատարմութիւն և ամենախոր վստահութիւն տիրէ: Իրարմէ զաղտնի բաներ ունենալու չեն, բացի պաշտօնական խնդիրներէ: Ամուսնական սէրը պահելու և հետզհետէ աւելի զօրացնելու համար կանխատեսութիւն, ահա՞ քանք, խանգաղատանք, փափկանկատութիւն պէտք է. պէտք է զգուշանալ դիմացինը վշտացնող բաներէ, զայն յուսահատութեան մղող խօսքերէ, ևւայլն:

Պօղոս առաքեալը, որուն ամենատեսութիւնը կը հիպնեն ոմանք, մեզի կը ներկայացնէ ամուսնական զաղափարական մը իզականօրէն բարձր, երբ Յիսուս Բրիստոսը ամուսինին տեղը կը զնէ և եկեղեցին՝ հարսին (Եփես. 5.25—28): Պիտի մաղթէինք որ բոլոր ամուսիններն ալ նմանին Անոր՝ որուն նկատմամբ Պօղոս կը զրէ, վարուին այնպէս՝ ինչպէս Յիսուս վարուեցաւ եկեղեցիին հանդէպ. այն ատեն ընդհուպ պիտի վերջանան ամուսնալուծումները: *ԹԻՎ. Վ. ՊէպէԱն

*Վերի յօդուածը, մօտերս հանգուցեալ Վեր. Ծ. Թօմայի «Ընտանիքը՝ Սիրոյ Դպրոց» քարոզին երկրորդ մասէն քաղուած է, մնացեալը նաեւ զատ խորագիրներով պիտի հրատարակուի: Ծ. Խ.

ԿՐՕՆԻԸ ՄԱՐԴՈՒՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Մեր ազգակիցներուն միծամասնութեան մանաւանդ երիտասարդութեան կողմանէ այս հարցումին տրուած պատասխանը բացասական է: Անոնք... գործնականապէս կ'ըսեն. «Եթէ կրօնքին նպատակն է մարդը բարեկարգել և ճշմարիտ մարդ յառաջ բերել, մենք կրօնքի պէտք չունինք. մենք կրօնասէր մարդերէն չա՛տ աւելի բարի ենք, ոչ մէկուն չարութիւն չենք ընկր, ընդհակառակը ամէնուն բարութեան համար կ'աշխատինք:»

Բայց զժրագոյաբար անոնց կեանքը իրենց զաղափարականին հետ չի համաձայնիր: Իրենք ասոր զիտակից չեն, քանզի կեանքի մասին իրենց չափանիշը իրենց անձերէն զուրս չ'իյլեր: «Անոնք իրենցմով իրենց անձերը չափելով, և զիրենք իրենց հետ բաղդատելով, չեն հասկնար:» Բ. Կորնթ. 10. 11: Անոնք կը կարծեն թէ ճշմարիտ մարդկութիւնը կը բաղկանայ մեծ մեղքերէ զգուշանալէ և ընդհանուր աւամար բարեմիտ ըլլալէ:

Անոնց մէջ երեան չեն դար ճշմարիտ քրիստոնէի մը մէջ տեսնուած սրբութիւնն ու սէրը, համբերութիւնն ու անձնագոյումը, խոնարհութիւնն ու ներողամտութիւնը, ճշմարտասիրութիւնն ու անձնաւորութիւնը, թափանցկութիւնը, գեղեցկութիւնն ու ներգաշնակութիւնը, քանզի անոնք զուրկ են քրիստոնէական կեանքի Աղբիւրէն: Ամէն՝ անձի և ամէն ժամանակի համար իր հիմնական առումով ճիշդ է Յիսուսի սա խօսքը՝ թէ «Առանց ինծի չէք կրնար բան մը ընել:» Ամէն մարդ անհրաժեշտ պէտքն ունի կրօնքի՝ ճշմարիտ մարդ ըլլալու համար. որովհետեւ. —

1. Ճշմարիտ մարդ մը Աստուծային ներումի արհրածնէս պիտի ունի, որ կարենայ մարդու մը գերադաս նկատել: Այսօր ամէն մարդ մեղաւոր անցեալ մ'ունի, ինչ

ալ փափաքած եւ որսչած ըլլայ ան։ Իսկ այս հանգամանքը իր մարդկութեան հիմը խախտած է, քանզի հոգեւոր աշխարհի հետ իր յարաբերութիւնը խլած է։ Եթէ այս յարաբերութիւնը չի վերահաստատուիր, մէկուն մշջճմարիտ մարդկութիւնը յառաջ չի կրնար գալ, քանզի ուսում հիմի մը վրայ հաստատուն չէնք մը չի կրնար կոռուցուիլ։ Այս միայն Աստուածային ներումով կարելի է։ Անցեալը մոռնալ, կամ այսօր ըստ փափաքներ ունենալ չի կրնար կացութիւնը փոխել, քանզի այս աշխարհը քոս մը չէ, այլ բարոյական, կատարեալ եւ արդար Աստուծոյ մը վարչութեան տակ կը գտնուի ան։ Մարդ իր ամէն մէկ գործողութեան եւ մտածումին համար Անոր պատասխանատու է։ Հետեւաբար մարդ չներուած իւրաքանչիւր մեղքին համար աստուածային դատապարտութեան տակ կը գտնուի, եւ չի կրնար Աստուծոյ առջեւ եւ մարդկութեան մէջ պատուաւոր դիրք մը զբաւել քանի այդ վիճակին մէջ չ'իյնայ։ ան չի կրնար մեծնալ եւ կը թաւաժի՝ հոգէն իր յարաբերութիւնը կտրած բոյսի մը նման։ Շինութեան մէջ եզոզ չէնք մը որուն առաջին շարքի քարերը տեղէն շարժած կամ քանդուած են, պէտք է կամ չի բարձրանայ եւ կամ ալ ան հիմէն պիտի կործանի։ Մեղաւոր անցեալի մը վրան շինուած մարդկութեան չէնքն ալ ճիշդ այսպէս է։ Այսպիսի մարդկութիւն մը սահմանափակ մարդկային բարութիւն մը կրնայ ցուցնել, բայց նկարագրի չէնքը չի կրնար դէպի ճմարիտ մարդկութիւնը բարձրանալ, եւ չտկնկալուած ստին մը կը քանդուի։

2. Արսափին բարեփոխութեանը մարդուն մէջ ճշմարիտ մարդկութիւնը յառաջ չի կրնար դաշ, որուն համար բնութեան փոփոխութեան անհրաժեշտ պայման է։ Մարդուն իսկութիւնն ու արժանիքը իր ներքին վիճակովն ու շարժառիթներովը կ'որոշ-

ուի, եւ ոչ թէ անոր արտաքին գործերովն ու յարաբերութիւններովը։ Բայց անոնք՝ որ մարդկութիւնը միայն մարդկային աչքով կը դիտեն եւ ոչ թէ կրօնական յայտնութեան եւ աստուածային զաղափարականի լոյսով, սովոր են կեանքի ներքինէն աւելի արտաքին կողմը դիտելու։ Անոնք կը կարծեն թէ պէտք եղած բարեկարգութիւնը կատարած եւ ճմարիտ մարդկութիւնը ապահոված են, իրենց եւ ուրիշներուն կեանքին մէջ եպերիկի արարքները եւ սխալ յարաբերութիւնները վերցնելով։ Հպարտ սիրտը՝ նորէն ներս կը մնայ եւ եւն է որ կեանքի վրայ իշխող կ'ըլլայ։ «Առաքինի գործեր» սիրոյ պատուները չեն, այլ եսին արտաքին հաղուստը եւ զարդարանքը։ Արտաքին փայլուն կեանքը ճմարիտ ազնուութեան եւ ներքին բարի բնութեան բնական մէկ արտայայտութիւնը չէ, այլ կամայ ահամայ կատարած մէկ շոգութիւնը իրապէս տիրող ետապաշտ բնութեան, առաքինի անուն մը եւ տեսակ մը Փարիսեցիական ներքին զոհացում մը ձեռք ձգելու համար։ Ճմարիտ մարդկութիւնը այս չէ սակայն։

Այս ախտին դարմանն է քրիստոնէութիւնը։ Անոր ոյժով, Աստուած կը խոստանայ որ «Անոնց բարոյականալու փափաքը պիտի ջնջեմ»։ Արդարութիւնն ու ճմարտութիւնը մարդոց գնած բաները չեն, այլ անոնց բնութիւններուն ճմարիտ մէկ արտայայտութիւնը պիտի ըլլան։ «Մէկը առանց վերադառնալու նանկու Աստուծոյ թագաւորութիւնը չի կրնար մանել», չի կրնար ճիշմարիտ մարդ ըլլալ։ Վերստին ծնունդ կը նշանակէ մարդուն նոր արարչագործումի մը գործողութեան հնթարկուիլը, անոր բնութեան եւ շարժառիթներուն հիմնական փոփոխումը։ Աստուած միայն կը կատարէ այս, Յիսուս Քրիստոս միջոցաւ։

3. Կրճեֆը միայն մեզի կ'ուսայ ճշմարիտ

մատրիքեան կասարեղագոյն չափանիշը: Աշխարհիկ մարդերը մարդկութեան մասին իրենց գաղափարականը մարդիւն կ'առնեն: Անոնք ճշմարիտ մարդկութեան իրը գաղափարականը կ'ընդունին այն բարոյական ըմբռնութեամբ՝ որոնք իրենց ծանօթ շրջանակներուն եւ մարդոց կեանքին մէջ ընթացիկ կը գտնեն: Բայց մարդկութեան այն գաղափարականը զոր կրօնքը մեղի կը ներկայացնէ, Աստուած ինքն է: « Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր հայրն ալ կատարեալ է: » Այս գաղափարականը այնչափ բարձր է նախկինէն, որչափ որ բարձր է երկրիքը երկրէն: Կրօնքը չի բաւականացաւ այս կատարեալ գաղափարականը վերացական կերպով տալով, այլ մեր Տէրոջ Բիսուսի մէջ մարմնացեալ կերպով ներկայացուց գայն: Յիսուս զործնականապէս ապրեցաւ այս կատարեալ կեանքը եւ այս կերպով ճշմարիտ մարդկութեան օրինակը եւ վարդապետը հանդիսացաւ: Կատարեալապէս մեղքէ ազատ մնաց Ան, որուն մէջ գոյ էր ամէն բարութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն, բոլորն էն կատարեալ առումովը: Անկրօններն իսկ ստիպում են խոստովանելու թէ մէկը կատարեալ մարդ է, եթէ Բիսուսի պէս ապրի:

Ճշմարիտ մարդկութեան մասին իրենց գաղափարներուն մէջ թէ զրական եւ թէ ժխտական կերպով կը սխալին առնօնք, որոնք ուղղակի Բիսուսի չեն նայիր իրը կեանքի գաղափարականը: Մեղքի մասին անոնց գաղափարը կատարեալ չէ: Ոմանք մարդկութեան հակառակ եւ գլուխի կը նկատեն կարգ մը մեղքերը իսկ անգիտաւ կը նկատեն ուրիշները, որոնք իրենց սիրելի են: Իսկ ուրիշներ գլուխի մեղքեր կը սեպեն առնօնց անգիտաւ նկատածները եւ ուրիշ կարգ մը մեղքեր կը հովանաւորեն: Զոր օր, ոմանց համեմատ թիթեարա-

բոյ խնդամուրթիւնը զբօսանք է, բարկութիւն եւ կռիւ՝ պատուախնդրութիւն եւ քաջութիւն, գինեո՛ւթիւնը՝ տնայնաս հաճոյք մը, մինչ ուրիշներուն համար սոսոնք այնպիսի պժգալի մեղքեր են, որոնք մարդկութիւնը կը ցածցնեն: Բայց ասոնց ալ կարծիքին համեմատ ազահութիւնը խնայողութիւն կամ չահը լաւ գիտնալ է, խարդախութիւնը՝ աչքբայտութիւն, ստախոսութիւնը՝ ճարպութիւն եւ քաղաքականութիւն, որոնցմէ կը զարչին աւաջիները: Դրական կերպով ալ իւրաքանչիւրին առաքելութեանց ցանկը իրարմէ կը տարբերի, բայց երկուքին ալ ցանկերը սահմանափակ եւ միակողմանի են: Ոմանք միայն բարեգործութիւնը, ուրիշներ անկեղծութիւնը, ոմանք ազգասիրութիւնը, ուրիշներ քաղցրաբարոյութիւնը եւ քաղաքավարութիւնը բաւական կը նշկատեն: « Լուսոյ պատուը ամէն կերպ բարութիւնով, արդարութիւնով եւ ճշմարտութիւնով է: » (Եփս. 5.9): Այս կատարեալ գաղափարականը մեղի ճշմարիտ կրօնքը միայն կրնայ տալ Բիսուս Քրիստոսով:

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
(Շարունակելի)

ՄԻԱՅԵԱԼ ՍԻՆՏԱՐԱՆՁՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Սուրբոյ եւ Պաղեստինի Միացեալ Միսիոնարական Խորհուրդը՝ Ապրիլի առաջին ամսուան մէջ Երուսաղէմի մէջ իր ժողովը ունեցաւ, որ կը կատարուի ամէն երկու տարին անգամ մը: Այս հաւաքոյթը շատ կարեւոր էր, առնոր համար որ կազմակերպութեան բնոյթը փոխուեցաւ եւ սահմանադրութեան մէջ կատարուած փոփոխութեամբ մը անդամակցութիւնը բաց թողուեցաւ Սուրբոյ եւ Պաղեստինի մէջ աւետարանչական նպատակ ունեցող բոլոր քրիստոնեայ իմաստասէր-

թիւններու: Այս բարեփոխութեան շնորհիւ մեր միութիւնը, զոր օւր, իրաւունք կ'ստանայ անդամակցութեան, որուն համար հրաւէր պիտի զրկուի Հայ Աւետ. Միութեան այս ամառ Քէսսպի մէջ կատարուելիք իր ժողովին ատեն:

Մինչև հիմա Միացեալ Միսիօնարական Սորհուրդը օտար միսիօնարական ընկերութիւններու ներկայացուցիչներէն կը բաղկանար միայն: Բայց հիմա, անոր անդամներուն թիւը պիտի աւելնայ տեղացի աւետարանական եկեղեցային կազմակերպութիւններու մօտաւորապէս թիւով 25 ներկայացուցիչներուն յաւելումով: Սուրբոյ և Պաղեստինի մէջ այսպիսի երեք մեծ խմբակցութիւններն են, 1) Սուրբոյ Երիցական Եկեղեցին, 3500 անդամներով 2) Պաղեստինի Եպիսկոպոսական Եկեղեցին, 3000 անդամներով, 3) Հայ Աւետ. Եկեղեցին 3000 անդամներով: Անոնց և նման կազմակերպութիւններու անդամակցութեան համար իբր հիմ պիտի ծառայէ անդամներու թիւը, այնպէս որ իւրաքանչիւր 500 անդամներու կամ անոր մեծամասնութեան համար ունէ խմբակցութիւնը մէկ ներկայացուցիչ պիտի կրնայ տալ, սա պայմանաւ որ իւրաքանչիւր խմբակցութիւն ի թէ նոյնիսկ 250էն պակաս անդամակցութիւն մ'ունի պիտի կրնայ մէկ ներկայացուցիչ տալ: Այսպէս յիշուած երեք կազմակերպութիւններէն առաջինը 7, իսկ երկրորդը և երրորդը վեցական ընդամենը 19 ներկայացուցիչներ պիտի տան, ոսոնց վրայ պիտի աւելնան որիչ եկեղեցիներու 6-7 ներկայացուցիչները:

Միացեալ Միսիօնարական Սորհուրդը պատերազմէն քիչ վերջ կազմուած է, Սուրբոյ և պաղեստինի մէջ գործող օտար միսիօնարական մեծ ընկերութիւններու միջև գործակցութիւնը զար-

գացնելու համար: Անգամակցութեան իրաւունքը սահմանափակուած էր միայն այն ընկերութիւններուն որոնք այս երկիրներուն մէջ բնակող որոշ թիւով մարդիկ ունին, և այս ընկերութիւնները միայն օտարներու կողմանէ կրնային ներկայացուիլ: Սորհուրդին ազդեցութիւնը կամայ կամայ մեծցաւ, և ասոր իբր արդիւնքը միութեան և փոխադարձ բարեացակամութեան զգացումը զօրացաւ: Անգլիացի, Եւրոպացի և Ամերիկացի միսիօնարներ, որոնք Եպս., Երկց. և Աւետ. եկեղեցիներու և անկախ կազմակերպութիւններու կը պատկանին, սորվեցան իրիւ քրիստոնեայ եղբայրներ միասին ապրիլ և իւրարու յաջողութիւններով ուրախանալ:

Սորհուրդին սահմանափակումները աւելի ու աւելի զգալի եղած են, անոր օտար ընկերութիւնները ներկայացնող միայն օտարներու մէկ կազմակերպութիւնը ըլլալուն համար: Բայց վերջապէս, այս տարուան ժողովը լրացուց այն գործը որուն համար երկու տարի առաջուան ժողովը քայլեր առած էր, Սուրբոյ և Պաղեստինի աւետարանական եկեղեցիներէն ալ լման անդամակցութեան իրաւունքով ներկայացուցիչներ ընդունելու համար:

Այս փոփոխութեան ետեւը կայ աւելի մեծ նշանակութիւն ունեցող իրողութիւն մը, այսինքն մտայնութեան փոփոխութիւնը որ շատ մը տեղեր ընդհանուր միսիօնարական գործի մասին տեղի ունեցած է:

Աշխարհ հիմա պզտիկցած է: Զինաս. տանի, Ճաքոնի, Հնդկաստանի և ուրիշ նման երկիրներու եկեղեցիները աւելի զօրացած են: Իւրաքանչիւր երկրի եկեղեցին իր երկրի մէջ քրիստոնէական գործի համար ունեցած իր պատասխանատուութիւնը աւելի լաւ ճանչցած է: Կարգ մը երկիրներու մէջ, զոր օր. Զինաստանի մէջ զէպքերու բերումով բո-

լոր պատասխանատուութիւնը տեղական եկեղեցիներու վրայ նետուած է: Անոր արդիւնքը ըլլալով մարդիկ կ'սկըսին քրիստոնէական աշխարհի մասին, իբր ամբողջութիւն, նոր կերպով մը մտածել: Քրիստոնեայ եկեղեցիները ամէն տեղ աւետարանիչ զրկող եկեղեցիներ են եւ պէտք է ըլլան: Յեղափոխական պայմաններու յարանուանական տարրերութիւնները ճանչցուելու չեն: Հասարակացնպատակի եւ ծառայութեան մէջ ամէնը մէկ են: Միայն թէ ոմանք աւելի հին, իսկ ուրիշներ աւելի երիտասարդ են: Բոլորն ալ աւետարանչական եկեղեցիներ են: Ահա այսպէս, Միացեալ Միսիօնարական Խորհուրդին առաջ քաշուով, Սուրբոյ եւ Պաղեստինի մէջ հին եւ նոր բոլոր աւետարանչական ոյժերը բոլորին հասարակաց միսիօնարական նպատակի մը շուրջ իբր հաւատաւորներ պէտք է հաւաքուին: Դէպ ի յառաջ մեծ քայլ մըն է այս:

Հարցը այս է թէ արդեօք մենք պատրաստ ենք Միացեալ Միսիօնարական Խորհուրդին անգամակցելու: Արդեօք Մեր Միութեան եկեղեցիները զիտակցորէն ունին այս միսիօնարական նպատակը, որ անգամակցութեան հիմն է: Միութեան յառաջիկայ ժողովին մէջ խորհրդակցութեան հարց մըն է այս:

Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ

(Բ)

Հայ պետութեան կողմէ քրիստոնէութիւնը հալածուած ըլլալով, ամբողջ հայաշխարհ հեթանոսութեան ճիւղները ինկած էր: Կռապաշտութիւնը ծաղկած եւ մեհեանները պայծառացած էին երբ Լուսաւորիչ կը հեծէր բանտի մահաբոյր խորշերուն մէջ եւ աստուածային շնորհքով հրաշխք իմն

կ'ապրէր, որովհետեւ Աստուած անոր ձեռքով երկրորդ այցելութիւն մը պիտի ընէր Հայաստանի մէջ:

Հետաքրքրական ըլլայ թիւեւ այդ օրերուն հայ պաշտամունքին առարկայ եղող զլիսաւոր հաստուածներու անուններն ալ յիշել: Անոնք՝ Կուս հայկականներէն զատ յոյն եւ հռովմէական հաստուածներու ներկայացուցիչներ ալ կը պարունակէին իրենց թուոյն մէջ: Նշանաւորներն էին, Արամեայ, որ կը նկատուէր աստուածներու հայրը եւ երկնի ու երկրի արարիչը: Նանք, Արամայի աղջիկը պարկեշտութեան չաստուածը: Տեր, արամայի քարտուղարը կամ գրողը, որուն համար հայեր կը հաւատային թէ՝ նորածնի ճակտին ա՛յս է անոր ճակատագիրը զորքը եւ թէ մարդոց չար ու բարի զործերը իր քով նշանակելով Արամայի կը ներկայացնէր իբր տեղեկագիր: Ասկէ ծագում առած են հայոց մէջ նախքան զիւր, կրողը քանի եւ այլ նմանօրինակ խօսքեր: Անանիս, զգաստութեան եւ կենդանի գեղեցկութեան չաստուածը կը նկատուէր, իսկ Վանագն, քաջութեան, ոյժի եւ յանգնութեան, որուն կը վերադրուէր յարցողութեան ծանօթ առաջադր: Մինչ, կրակի չաստուածը եւ այլք, որոց թուումը մեր նիւթէն պիտի շեղեցներ ըզմեկ:

Այս էր հայաշխարհի կրօնական վիճակը երբ հասարակ ղէպքի մը միջոցաւ Աստուած իր նախախնամական ծրագրը կիրարկեց հայոց մէջ: Այդ ղէպքը, ինքնին աննշան, Հովիթսիմանց նահատակութիւնն էր: 301 թուականի Նոյնմբերին, Ս. Գրիգորի բանտարկութեան 14րդ տարին լրանալու ատենները, յանկարծ Հայաստանի մէջ կ'իւրեւան 37 կոյսեր. «Քրիստոնեայ դարձած, թագաւորական ցեղէ, անըման գեղեցկութեամբ փախստական աղջիկներ» ինչպէս կը հաւատատէ Խորե-

նացի, որոնց համար կը կարծէ որ Հռոմէն փախած ըլլան: Խորենացիի և Աղաթանգեղոսի նոյնօրինակ վկայութիւնները չկրցան տոկալ պատմաքննական դատաստանի և վերջերս այնպէս համոզուեցանք որ այս կոյսերը պարզ հայ քրիստոնեաներ էին և հալածական դարձած, կառավարութեան աններող քաղաքականութեան պատճառով:

Խորենացի կ'ըսէ թէ, երբ Հռիփսիմեանք Հայաստան մտան, Հռոմի կայսրը Դիոկղէտիանոս անոնց փախուստը լմաց կուտայ իր բարեկամին, հայոց Տրդատ թագաւորին, Հռիփսիմէն ձեռքառելու և Հռոմ վերկելու հրահանգով (որովհետեւ կուզէր անոր հետ մոտենանալ) և կամ իրեն պահելու արտօնութեամբ: Տրդատ անմիջապէս հետապնդել տուաւ կոյսերը, նոյն իսկ իթէ անոնց Հռոմէն փախած և Դիոկղէտիանոսի կողմէն տեղեկագրուած ըլլալը շինծու առասպելներ ըլլան: Ի վերջոյ կոյսերը Վաղարշապատի քով կը ձեռքառուին և իրենց զխաւորներէն Հռիփսիմէն և Գայեանէ Տրդատի պալատը կը տարուին: Տրդատ մոտենութիւն կ'առաջարկէ Հռիփսիմէնի, որ խոտիւ կը մերժէ, Գայեանէ ալ կը քաջալիրէ Հռիփսիմէն ընդդիմանալ «կռպաշտ» թագաւորին: Անոնք օր մը պատեհութիւն մը կը գտնեն արքունի պալատէն խոյս տալու: Տրդատ զինուորներ կը զրկէ և Հռիփսիմեանք 37 ընկերուհիներով կը նահատակուին Վաղարշապատի մէջ, 301 Նոյեմ. 6-7ին և անոնց մարմինները անթաղ կը ձրգուին ընդհանուրին առջև նշաւակուելու համար:

Սակայն Տրդատ անպատիժ չի մնար իր այս անվայել ընթացքին համար և Աստուծոյ ձեռքը կ'երկարի իր վրայ, ընդհանուր բարիքի միջոց մը դարձնելու համար Տրդատի անձը: Տրդատ գայլախոտութիւն (lycantropy) կոչուած հի-

ւանդութեամբ մը կը տառապի և խորունկ մեղամաղձոտութիւն մը զիւսահարի մը նման կը ցնցէ իր ամբողջ նութիւնը: Նոյն ախտէն կը վարակուին նաև կարգ մը պալատականներ, Տրդատի անմիջական շրջապատէն: Խորոզմիզոս, որ ախտէն վարակուած էր և զիտենք որ Լուսաւորիչի բանտին և կեանքին պահապան հրշտակն էր, նոյն օրեր տեսիլք մը կը տեսնէ, որը հինգ անգամ կը կրկնուի: Տեսիլքին մէջ քրիստոնեայ Խոսրովիզոստի կը հաւատաւորի որ իր եղբայրը մի միայն Գրիգորի ձեռամբ կրնայ բժշկուիլ: Տեսիլքը որքան զարմանք, նոյնքան ալ կասկած կը պատճառէ Գրիգորի գուրին մէջ ողջ մնացած ըլլալուն մասին: Վերջոյպէս հրահանգ կը տրուի Երանեկին հանել բանտանկուղէն և բերել Տրդատի առջև:

Ս. Գրիգոր հինգ օր պահք և հսկում կը հրամայէ և անկէ վերջ ախտավարակեալներու վրայ ազօթիւով կը բժշկէ զանոնք և բազմաթիւ ժողովուրդի հետ ամբողջ արքայական պալատը կը մկրտէ յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սբբոյ: Այդ պահքին յիշատակը յաւերժացնելու համար Հայ Եկեղեցին գրած է «Առաջաւորաց պահքը» որ մինչև այսօր կը տեւէ: Ահա այսպէս Աստուած, Թագէտս և Բարդղղիմէոսէն վերջ, երկրորդ անգամ կ'այցելէր հայոց, Ս. Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ, 301 Նոյեմ. 17ին:

Այդ ընդհանուր հրճուանքի և խանդավառութեան օրերուն Ս. Գրիգոր Լուսաւորիչ տեսիլք մը կը տեսնէ, յորում երկինք կը բայուի և Միածին Յիսուս լուսեղէն մուրճով մը արքունիքին մօտ գիտնին վնայ կը զարնէ երեք անգամ, ուր սիւն մը կը կանգնի, հրեղէն սիւն մը, բլրան մը չափ հսկայ խարիսխով և լուսաքանդակ խոյակով զոր կը զարդարէր հսկայ թեւերով խաչ մը: Կը տեսնէ նաև նման սիւներ Հռիփսիմեանց և Գայ-

Նահանգն անհատականաժ վայրին վրայ, և այս սխեմները միանալով կամար մը կը կազմեն, որուն վրայ կրկին կը շողայ խաչը փրկչական: Ս. Գրիգորի հրահանգին համաձայն այդ վայրերու վրայ Էջմիածնայ տաճարը կը կանգնուի, ուր Լուսաւորիչ տեսաւ որ Քրիստոս Միածին Իջաւ, և Հռիփսիմեանց անհատականաժ տեղն ալ երկու տաճարներ Շողակաթ անուն, ուր լուսեղէն շող կաթիցաւ երկինքէն:

Այս տեսիլքի օրերը՝ Լուսաւորիչ ամբողջ երկրին համար ապաշխարութեան շրջան կը հռչակէ, որ աղօթքով ու հսկումով կ'անցնի ամբողջ 66 օր, մաքրուելու համար կռապաշտութեան և կրակապաշտութեան ազտեղութիւններէն:

Հաղկոյ

ՌԵՏՈՒՆԻ

(Շարունակելի)

ԻՆՉՊԷՍ ՊԵՏԻ Է ՔԱՐՈՁԵԼ

Եթէ պատգամ մ'ունիս տուր, եթէ չունիս լռէ: Կարճ նախարաններ և ներածութիւններ ունեցիր: Քու լաւագոյն բաներդ առաջ ըսէ և խօսելէ զպարէ ճապաղ չգարձած: Ուտելու ախորժակը մի խափաներ պէտք եղածէն շատ աւելի ջրոտ նօսք ապտորով: Անձը բեմէն դուրս գիր, խի Յիսուսը՝ ներս: Աւետարանը պաշտպանէ և թող որ Տէրը քեզ և նկարագիրդ պաշտպանէ: Եթէ քու մասիդ կը ստեն, շնորհակալ եղիր ստանալէն որ քեզ արթուն ըլլալու կը մղէ, և աշխատէ որ սուտը երբէք չիրականանայ: Եթէ չես ուզեր ուժասպառ ըլլալ շապիկիդ օծիքը մէկ մատնաչափ աւելի լայն ըրէ, և թող արիւնը առիթը ունենայ դէպ ի սիրտ ևտ հոսելու: Շատ շուտ մի գրգռիր: Քու ունկնդիրներէդ խոյս մի տար: Մեքենան քշող անիւները աւելի արագ կը գտնան երբ բեռ չկայ,

բայց աւելի դանդաղ կը շարժին երբ ծանրութիւն մը կը քաշեն:

Պաղ մօրճ մը պէտք է տաք երկաթը ծռելու համար: Հրահրէ ժողովուրդը, բայց մօրճը պաղ պահէ:

Մի՛ պոռար կոնչեր: Չափազանց շատ ջուրը ջաղացքի անիւները կը կեցընէ, և չափաւանց շատ աղմուկը իմաստը կը խեղդէ: Որտեղ մը փայլատակում չէ: Փայլատակումը կ'ապաննէ: Եթէ դուն կայծակ ունիս, չես կրնար չորտալ: Բայց մի՛ փորձեր սարապ ամպի մէջէն որտալ:

Ժողովուրդը մի՛ յանդիմանիր: Անձրեւոտ օրերուն ժողովին եկող հաւատարիմ հոգիները չարաչար մի՛ գործածիր, չեկողներու պատճառաւ:

Փոքր ժողովուրդներուն լաւագոյն քարոզը տուր: Յիսուս ջրհորին քովը կնոջ մը քարոզեց, որ լուր Սամարիան շահեցաւ յաջորդ անգամ Անոր մօտիկ ընելու համար:

Եկեղեցիի մէջ քունի պատճառը դէշ օդն է շատ անգամ քան թէ գէշ վարքը:

Մի՛ կրկներ ըսելով, «Ինչպէս որ առաջ ըսի»՝ Եթէ առաջ ըսիր զայն, ուրեմն վերջը ուրիշ բան մը ըսէ:

Մի՛ գործածեր այն բառերը չորոնք չես կրնար սահմանել:

Արտասանութիւն ընելէ զադրէ՛ և մարդերուն խօսէ: Պոռոտախօսի և սըրբազան ատենախօսի հոգիք մի՛ առնիր, և պզտիկ մանուկ մը եղիր:

Նիւթը փոխէ եթէ ան դժուար կը լայ, մի՛ ծանձրացներ ինքզինքդ ինչպէս նաև ուրիշ ոեւէ մէկը:

Մի՛ քարոզեր մինչև որ քարոզիդ միջին մասը առաջին մասը չի թաղեր, և վերջին մասէն չի թաղուիր:

Մարդերուն երեսին նայէ, և այնպէս ապրէ որ չվախնաս անոնցմէ:

Երկար շունչեր առ, թոքերդ լեցուր, և զանոնք լեցուն պահէ: Օգը չհատած շունչ առ: Ապա դուն իրաքանչիւր

նախադասութեան վերջը շնչասպառ պիտի չըլլաս, սարսափելի հեքով մը իբր թէ օդի սակաւութենէն կը խեղդուիս, ինչպէս որ կարգ մը քաղցիւններ սովոր են:

Ուռնցուր թռքերդ: Չափաւոր կերպով սկսէ, քիչ վերջը աւելի ուժով շարունակէ, երբ քարոզիդ կէսը անցեր ես աւելի ոյժ գործածէ, և երբ վերջացնելու կը մօտենաս լման թափով մը զործածէ բոլոր ոյժդ:

Լաւ նշան տո, անվրէպ զարկ նշանակէտին: Կեցիր եւ տես թէ որ տեղը զարկեր ես, և ապա երկրորդ լայնարձակ կրակ մը բաց:

Քարոզներդ խտացուր: Բառերդ զնգակներու նման չինէ: Տախտակ մը աւելի կը ցաւցնէ մարդը, եթէ անոր ծայրովը զարնես:

ԹՐԳ. Տ. Ճ. Խ.

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՈՒԱԼՏԷՆՍՅԵՐՆԵՐԸ

Աշխարհիս հնագոյն Բողոքականներն են Ուալտէնսցիները, որոնք Լուտերէն 300 տարի առաջ ժԹ. դարուն աւետարանականութեան ջահակիրներն էին Իտալիոյ մէջ, և այսօր էն զործօն եկեղեցիներէն մէկը կը կազմեն: ԺԹ. դարուն մէջ Ուալտէնսցիները մեծ թիւով կամաւորներ տուած են Սարտենիոյ թագաւոր Վ. Էմմանուէլի բանակին, որ Իտալիոյ միութիւնը լրացուց 1870 ին: Ուալտէնսցիները մեծ հռչակ ստացան իրրեւ հայրենասէր: Հոսովի դրաւումէն 10 օր վերջը Ուալտէնսցի առաջին քարոզիչը հոն կը քարոզէ: Ներկայիս Հոսովի մէջ երկու մեծ եկեղեցիներ և ասածր. ճեմարան մ'ունին: Իտալիոյ 50 քաղաքներուն մէջ կան 60 Բող. եկեղեցիներ, 6020 անդամներով: Ուալտէնսցիներուն զօրաւոր կեդրոնն է, սակայն, Սլպեան հովիտները, ուր ունին Գոլէճ մը, վար-

ժապետանոց մը, հիւանդանոց մը և այլն: Ֆաշիսթ կառավարութեան հրամանով կազմուած Լա Պալիւա (սքաութ) կազմակերպութեան մէջ Ուալտէնսցի պատանիները կրօնական բացարձակ աւատութիւնը կը վայելին: Ուալտէնսցիները Ֆրանսայի Աւետ. Եկեղեցիին հետ կը զօրծակցին միսիօնարական զործին մէջ:

ՍԵՒ ՏՂՈՅ ՈՒՍՏԸ

Մեր նոր սերունդին ուշադրութեան կը յանձնենք նիկրօ տղաներուն հետեւեալ ուխտը, Մ. Նահանգներու մէջ. —

«Պիտի աշխատիմ երբէք անպատուութիւն չի բերել իմ ցեղիս՝ ոեւէ անվայել արարքով մը: Մաքուր հեանք մը պիտի ապրիմ, եւ իզական սեռի պատիւը և առաքինութիւնը միշտ պիտի պաշտպանիմ և պիտի յարգեմ: Ես իմ երկրիս եւ իր մէջ գտնուած հասարակութեան արդար օրէնքներուն պիտի հնազանդիմ եւ պիտի յարգեմ, եւ ուրիշները պիտի քաջալերիմ ընելու նոյնը: Ես երբէք չպիտի թողում որ նախապաշարումը, անարդարութիւնը եւ թշնամանքը իմ հոգիս ստորնացնեն և դառնացնեն, այլ միշտ պիտի պահեմ սրտի և խղճի ներքին ազատութիւնը: Երբէք պիտի չթողում որ չարէն յաղթուիմ, բայց միշտ պիտի ջանամ չարին յաղթել բարիով:»

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԱՏԵՐՈՒ ՄԻՋՈՑԱՒ ԼՍԵԼ

Բապըրթ Կօլթ անուն Սմերիկացի մը զործիք մը հնարած է, ճիշդ հեռախօսի զրութեամբ, խոլիբուն հեռախօսակցելու համար: Այս զործիքին մէկ ծայրը խօսողին բերանը պիտի գտնուի, իսկ միւս ծայրը լսողին ոչ թէ ականջը այլ ձեռքին մէջ, ասոր երկու ծայրերը իրարու կը միանան թելով մը, որ խօսողին բերնէն բառելուն թրթոտմիւրը

պիտի փոխանցէ խուլին մատերուն, որուն միջոցաւ խուլը տարբեր թրջութ- ուններէն պիտի հասկնայ տարրեր բա- ռերուն իմաստը:

Խուլերը թրթռումներուն իմաստները հասկնալէ վերջ կը սորվին նաեւ իրենք ալ խօսիլ և նոյն թրթռումները արտա- ղրել: Այս զործիքը երբ կատարելա- գործուի խուլերը երբէք չպիտի զրկուին կատարելալ խօսքով իմաստը օժտուած մար- ղուն բոլոր վայելքներէն:

ՍՍՌՈՒՑԵԱԼ ՈՎԿԻԱՆՈՍԻ ՍՍՌԸ ԵՒ ՕԴԻՆ ԲԱՐԵՆԱՌՆՈՒՄԸ

Ովկիանոսներու մէջ կարգ մը տաք կամ պաղ հոսանքներ ցամաքներու օղին և կլիմային վրայ մեծապէս կ'ազդեն զա- նոնք պաղեցնելով կամ տաքցնելով: Դիտուն մը կը խորհի նոր կերպ մը օդը բարեխառնելու համար: Սառուցեալ ովկիանոսներէն եկող պաղ հոսանքնե- լը, որոնք իրենց հետ մեծ սառնալիւններ կը բերեն, հասարակածի տաքութիւնը ծծելէ վերջ կերթան Եւրոպական ցամա- քը և Աւստրալիան բարեփոխել և տաք- ցընել և այս կերպով ամառնային երաշ- տութիւնը արգիլել:

Պրաուն անուն այս գիտունը կը խոր- հի թէ այս հոսանքներուն մէջ սառնա- լիւններու թիւը աւելցնելով կամ պակ- սեցնելով պիտի կրնայ օդը եղանակա- լորել պէտքերն համեմատ: Այս կարելի պիտի ըլլայ եթէ մի քանի զործէ դադրած ռազմանաւեր սառուցեալ զօտի մէջ սառնարանները ռմբակոծելով արուես- տական սառնալիւններ արտադրեն պէտք եղած ատենը, իսկ գտնոնք իրենց տեղը պահեն երբ պէտք չըլլայ:

ՄԵՏԱՂՆԵՐԸ ՊԻՏԻ ՍՊԱՌԻՆ

Դեռ երէկ մարդիկ իրենք զիրենք մեծ տաքնապի մէջ կ'զգային, խորհելով որ հանքածուլը իր ներկայ տարեկան քաղաղութով մի քանի դար վերջը հասած

պիտի ըլլայ: Այս տաքնապը մեծ չա- փով մը անհետացած է շնորհիւ երեք- տրականութեան: Բայց այսօր ուրիշ տաքնապ մը սկսած է երևան գալ ճար- տարարուեստի տէրերուն և գիտնական- ներուն միջև, կարգ մը կարեոր մետաղ- ներուն հատնելու վտանգին մէջ ըլլալ- նուն համար:

«Երկրի մետաղային հարստութիւնը անսպառելի չէ» կըսեն անոնք: Եւրո- պայի մէջ երկաթի, սնդիկի, ալումինը- մի, գինքի, կապարի և պղինձի արտա- ղրութիւնը մեծապէս սկսած է նուազիլ, այնպէս որ պահանջին զոհացում տալու համար Ամերիկայի հանքերը սովորակա- նէն շատ աւելի արտադրութիւն կ'ընեն, որուն պատճառաւ նոյն երկրին կարգ մը շրջաններուն մէջ կարգ մը հանքեր հատնելու վրայ են:

ԱՂ ԳՈՐԾԱԾԵՆԸ ԹԷ ԶԳՈՐԾԱԾԵՆԸ

«Աղը թէ զործածել լաւ է և թէ չգոր- ծածել. միեւնոյն ատեն երկուքն ալ վտանգներու պատճառ կրնան դառնալ», կըսէ Տօքթ. Թօմ, Ֆրանսացի սնդագէտ հեղինակ մը: Կարգ մը պարադաներու տակ աղը չկարենալով արտաքսուիլ մարմինն մէջ կը հաւաքուի, պատճառ ըլլալով կարգ մը բարդութիւններու: Ահա այն ատեն աղ առնել կը նշանակէ թոյն ստանալ, եւ պէտք է աղ չզործա- ծել մինչև որ անոր քանակը բնականոն աստիճանի իջնայ: Իսկ երբ կարգ մը հիւանդութիւններու ազդեցութեամբ եւ կամ ուրիշ միջոցներով (չոր. օր. երբէք աղ չզործածել կամ քիչ զործածել) աղի քանակը կը պակսի զգալի կերպով, մարմինն մէջ նոյնչափ վտանգաւոր վի- ճակ մը կ'ստեղծուի, որուն միակ դար- մանն է աղ զործածել: Այնպէս որ, ըստ այս գիտնականի կարծիքին, արեւոյն մէջ աղի քանակը քննութեամբ որոշուելէ վերջ պէտք է աղ զործածելու կամ չզոր- ծածելու արտօնութիւն տալ հիւանդին:

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆՆԵ-
ՐՈՒ ՏԱԿ

Ապրիլ 27ին, Այդիկայէ Եկեղեցիին վարի սրահը, Հալէպի Հայ Աւետ. հասարակութիւնը ներկայացնող բազմութիւնը մասնաւոր հաճոյք վայելեց՝ Ամերիկայէն եկած հիւրերուն ի պատիւ տրուած թէյասեղանին մասնակցելու։ Վեր. Ս. Տէվրիւհանի, Տէր Է. Տիկին Կէրթմէնեանի, Տէր Է. Տիկին Սարկաւազեանի կարծ ներկայութիւնը մեր մէջ սփոփարար ապաւորութիւն մը ձգեց, մեզի վերլիչի տալով անցեալը, իրենց տաք համակրանքը յայտնելով զաղթականի կեանքի համար և սրտապնդիչ երեւոյթներ գտնելով հայ կեանքի խեղճներուն մէջ։ Սիրաջերմ բառերով Վեր. Տէվրիւհան յայտնեց ուրախութիւնը՝ թէ այսչափ զգաւորութիւններու և առաջադանքներու ենթարկուելէ վերջ մուրացկաններ զրկեթէ չկան հայերու մէջ և իր հաւատքը յայտնեց հայցեղին ապագային մասին։ Տիար Կէրթմէնեան, իր բարեկրթութիւններով ծանօթ սիրուած վաճառական մը, որ կրցած է իր բնածին ուշիմութեամբը նախանձիկի դիրք մը չինել Ամերիկայի մէջ, նմանապէս քաջալերիչ բառեր խօսեցաւ, հայ ազգը նմանցնելով միշտ յատուի ենթակայ բայց միշտ ալ վերածաղկող վարդաստանի մը, և յորդորեց զգուշանալ միայն տունիկը սպաննող փոքր ճճիներէ։

Տիկ. Կէրթմէնեան խօսեցաւ Ամերիկայի մէջ կալուած «Ֆրէնտզ ափ Արմենիա»-ի մասին որուն հիմնադիրներէն է։ Այս ընկերութիւնը մեծ մասամբ օտար 10 այր, 50 կին անդամներ ունի, և ներկայիս կ'օգնէ 8 որբերու և 2 ուսանողներու, 4 տարիէ ի վեր Հայ Աւետ. Ընկ. եան միջոցաւ կ'օգնէ Քէսապի գաշտին, որուն բոլոր հոգը կը յուսայ

ազնուօրէն ստանձնել յառաջիկային։

Պր. Սարկաւազեան, բնիկ Խարբերդցի, հանգուցեալ Վեր. Կ. Մխիթրեանի հիացողը և անոր եկեղեցիին մէկ անդամը, իր գուարթ գեղջուկ երգերով ուրախացուց ներկաները։

Բոլոր ներկաները, խիստ զոհ այս եկեղեցիկ առիթով այս հին բարեկամներու հետ տեսնուելուն համար, բաժնուեցան անոնցմէ աւելի տեսնուելու փոփաքը սրտերնուն մէջ։

Վեր. Ս. Տէվրիւհան հետեւեալ Կիրակի օրը երկու Հայ Աւետ. եկեղեցիներու բեմերէն քաղուեց, տալով իր գործնական շինիչ ապագամները։

ԿԵԱՆՔԸ ՁԱՀԼԻՒ ՄԷՋ

Ջահլէ լեռնային Լիրանանի կարեւորագոյն քաղաքն է, իւր մուհաֆլզութեան (միւթասարըֆութիւն) կեդրոն և յայտնի ամառանոց, ուր ամէն տարի շրջակայ երկիրներէն ամառը անցնելու համար 10 հազար հոգի կուգան, որուն 8500ը Հայերէ կը բաղկանան։ Բայց վերջելիս Պաղեստինի և Եգիպտոսի մէջ հոսանք մը յառաջ եկած է ամառը Կիրակի մէջ անցնելու համար, որով այդ երկիրներէն Ջահլէ եկողներուն թիւին մէջ զգալի նուազում մը նշմարելի է։

Քաղաքին բնակչութեան թիւն է 20,000 հոգի, հայերը կը բաղկանան 225 տուներէ, 170ը Հայ Աւետ., 35ը Հայ Աւետ. և 20ը Հայ Կաթոլիկ։ Առաք. համայնքը կը հովուէ Տ. Ա. Հայր Տրէդեան, խելահաս և բարեպաշտ անձնաւորութիւն մը, Աւետ. եկեղեցիին հովիւն է Վեր. Յակոբ Շնորհօքեան, որ սիրուած է բոլոր հայութենէն անխտիր և կը վարէ միեւնոյն առեն Զ. Բ. Ը. Միութեան տեղական մասնաճիւղին ատենապետութիւնը։ Ապրիլ 15ին, Միութեան ԻԳ տարեդարձը տօնուեցաւ համազային շուքով մը։ Զ. Բ. Ը. Մ. Մասնաճիւղը ունի 61 անդամներ, 36

Օսմ. ոսկի տարեկան հատոյթ, բայց իր միջոցաւ Պատալպէքի եւ Զահէի չորս վարժարաններուն տարեկան 110 Անդ. ոսկի նպաստ կը արուի: Զահէի երեք հայ դպրոցն երբեք աշակերտութեան թիւն է 205 (135 Առաք. 55 Բող. 15 Կաթ.):

Առաք. համայնքը մօտ օրէն կ'ունենայ իր գեղեցիկ եկեղեցական շէնքը, որուն ծախքը (1200 ոսկի) կը հայթայթուի Տիար Յակոբ Պալըզճեանի կողմանէ: Միւս համայնքները տակաւին կը գործածեն վարձու շէնքեր կրթական եւ կրօնական նպատակներու համար:

Բաց ի Հ. Բ. Ը. Մ. էն կան նաեւ չափահաս ինքնաբաւ որբերու միութիւն մը եւ եօթը հայրենակցական միութիւններ, Այնթապի (174), Մարաշի (60), Քիլիսի (30), Հաճինի, Էվէրէքի, Պարբերդի, ևայլն:

Տնտեսապէս լաւ են Զահէի հայերը ոչ ոնցմէ միայն երկու բնտանիք նպաստ կ'ստանայ, եւ կը պատկանի աշխատաւոր եւ արհեստաւոր զտակարգին, կան նաեւ պանդոկապետ, 4-5 ազատորուեստականներ:

Զահէի կցուած են Պատալպէք եւ Բայաթ. վերջինին մէջ կան 150 հայեր, որոնք կը պահեն 18 աշակերտներով միջնարանականական դպրոց մը:

ԿԱԶԻՐԷԻ ՀՈՎԻԻԸ ՕՊԷՐԷԻՆ ԿՆՐԹԱՅ

Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ Քաւրոյիչը՝ Պատ. Հ. Յ. Համբարձումեան իր ուսումը կատարելագործելու համար Օգոստոսի սկիզբները մէկ տարուան համար Օպէրլին Գոլէճ երթալ ծրագրած ըլլալով, իր հրաժարականը տուած է եւ կեղեցիկն: Սակայն եկեղեցին միաձայնութեամբ իր հրաժարականը մերժելով որոշած է՝ որ մէկ տարուան բացակայութենէ վերջը Պատ. Համբարձումեան շարունակէ իր պաշտօնը: Յիշեալը ընդունած է եկեղեցիին որոշումը: Պատ. Համբարձումեան երեք տարիէ իվեր յա-

ջողութեամբ պաշտօնավարած է Գահիրէի մէջ եւ իր ճշմարիտ, օրինակելի քրիստոնէական կեանքովը, պիւճսիրօս եւ հոգեշունչ քարոզներովը ամենուն յարգանքին եւ սիրոյն արժանացած է:

ՄԻՋԴԴՈՑԱՅԻՆ ՄՐՏՈՒՄ

Ապրիլ 16ին, Մանչեսթը Բարձրագոյն Վրժ. Ի նախաձեռնութեամբ, ողիմպիական խաղերու մրցում մը կատարուեցաւ, մասնակցութեամբ իր եւ Հալէպի Հայ Կաթ. Գոլէճի, Գոլէճ տը Թէր Անթի, Փարուզիէ Գոլէճի եւ Երից. Բարձր վրժ. Ի: Բաց ի մէկէն (100 մէթը վազք) բոլոր խաղերու մէջ առաջնութիւնը շահեցաւ Մ. Բարձրագոյն Վարժարանը:

ԿԵԱՆՔԸ ՊԻԹԻԱՍԻ ՄԷՋ

Մայիս 4ին Շաբաթ իրիկուն, ժամը Տին տեղի ունեցաւ Հայ Աւետ. վարժարանի ամառային հանգէսը, պատրաստուած նախապրթարանի եւ ծաղկոցի աշակերտներուն անխոնջ աշխատութեամբը: Հոծ բազմութիւն մը փութացած էր գրաւել տեղերը եկեղեցիին մէջ, վայելելու ճոխ յայտադրով հանդէսը: Հանդիսականները շատ անուշ տպաւորութիւններու տակ ապրիցան, վոյալիլով արտասանութիւններ, երգեր ու մեներդներ որոնք այնքան գեղեցիկ եւ յարմար կերպով բնորոշած էին զպրօցին վարժուհիին Տիկին Արուսեակի կողմանէ: Զանից ընկերութեան ազջիկները իրենց աշխատութեան բաժինը չխնայեցին կատարելով բոլոր երգեցողութիւնները, այսպէս ապացուցանելով թէ իրենք եւս խոստապարտ են իրենց դաստիարակութեան համար, չոր այս զպրօցին ստացան:

Հանգէսին մէկ մասը կը կազմէր «Շոգոքորթը», Յակոբ Պարոնեանի մէկ կատակերգութիւնը. հակառակ գերակատար աշակերտներու անփորձութեան ներկայացումը շատ յաջող անցաւ, եւ սկիզբէն մինչեւ վերջը հանդիսականնե-

րը քրքջալիւ խնդութեան մէջ պահեց։ Ներկաները բաժնուէցան ուրախ սրտով եւ զուարթ դէմքով ու անուշ տպաւորութեամբ մը։

Ահագին բազմութեան մը այս հանդէսին մէջ ներկայութիւնը, իրենց պաւակները բխի վրայ տեսնելու բռնաբաղձանքը, շատ մը զոհողութեամբ իրենց դատարանները վաւ ժարան զրկելու յոժարութիւնը մտքին կը թելադրէին սա պաղաւթաբլթ թէ այս ժողովուրդը պատիարակութիւնը կրնայ գնահատել։ Բոլորովին սխալ է այն պաղաւթաբլթ թէ Պիթիասի ժողովուրդը ի վիճակի է հասկնալու բարձր մշակոյթին արժէքը, թէ ան ճաշակ չունի զեղեցկութիւնը գնահատելու։ Գիւղացիները, հակառակ պարզացումի միջոցներուն չզոյնութեան կամ անբարարութեան, ըստ բաւականին կիրթ ճաշակ մը մշակած են, որուն մէջ կրնան մրցիլ շատ մը քաղաքացիներու հետ։

Ներկայ սերունդը խիստ փայլուն ապագայ մը կը խոստանայ իր բարի վարքով, իմացական ձիրքերով, գպրոցական արժանիքով, տքնաջան աշխատութեամբ եւ կրօնարարական չափանիշով։ Սակայն այս ժողովուրդը չի կրնար իր ընդունակութիւնները պարզացնել կարգ մը պատճառներով որոնց գլխաւորն է չքուրուցութիւնը եւ քիչ մ'ալ կորովին պակասը։

Քիչ մը արտաքին օժանդակութեամբ, ու քիչ մը ներքին զոհողութեամբ պէտք է գործօն զիրքի մը մէջ պահել այս տեղի վարժարանն ու եկեղեցին, ապագայի մէջ սիրուն, հաճելի ու մտաւորական ոստան մը կանգնելու համար որուն համար այնքան յարմար է։ Պիթիասն է ճէպէլ-Մուսայի լոյսն ու յոյսը՝ իր առատ ու զուլալ ջուրով, մաքուր ու կենսաբար օդով, բարոյական ու կրօնական մակարդակով։

Մ. Մ. ԲԵՏՐԱՆԻԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքներէն Ձառք Տիֆլիսի
գրաւածներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻԻ ՈԳԻՆ

Մարլի մեռած էր. այս մասին ուրեք կասկած չըկար, որովհետեւ իր թաղման արտօնագիրը ստորագրուած էր պատկանեալ պաշտօնէութեան կողմանէ, եւ մեռելաթաղին կողմանէ, ու միակ ժառանգը եղող Սքուրճի կողմանէ։ Եւ Սքուրճ վստահելի մարդ մըն էր, քանի որ դրամական բոլոր գործառնութիւններուն մէջ մեծ վարկ չահած էր։ Ուստի Մարլի մեռած էր։

Այո, ծերունի Մարլի մեռած էր, եւ Սքուրճ լաւ գիտէր չայո, եւ ինչու չը գիտնար քանի որ երկար տարիներէ ի վեր միեւնոյն վաճառատան մէջ միասին աշխատակցած էին որպէս շահակից ընկեր։ Սքուրճ ինքը կըլար էր անոր միակ ընկերը, բարեկամը, խրատատուն, խնամակալը ու ամէն բանը, եւ ամէնէն վերջն ալ անոր սուրբ բռնողն ու ժառանգորդը։ Եւ քանի որ Մարլի մեռած, Սքուրճ իրեն ինկած վերջին պարտականութիւնը պատուաւոր կերպով կատարեց՝ զայն մեծ ակնածանքով թաղել տալով։ Սքուրճ իր սգաւորի յատուկ խոր վշտին մէջ քաղցր զոհունակութիւն մը կ'զգար, որովհետեւ մեռելաթաղին հետ շատ լաւ սակարկած էր, ու ասիկա կ'ապացուցանէր թէ ինք գերազանցօրէն առտուորի մարդն էր...

Սքուրճ երբէք չը սրբեց Մարլի տունը իրենց վաճառատան նշանատախտակին վրայէն. ան մնաց հոն, երկար տարիներ, ճիշդ հինին պէս, ՍԲՈՒՐՃ ԵՒ ՄԱՐԼԻ։ Ամէն մարդ կը ճանչնար «Սքուրճ եւ Մարլի» վաճառատունը։ Մարլի մեռնելէն վերջ՝ երբեք ուր յա-

ճախորդ մը կուզար և Սքուրճ կը կռէր, երբեմն ալ Մարլի կը կռէր, ասիկա իր քէք տարբերութիւն չէր ընէր Սքուրճի համար, երկուքին ալ միևնոյն անտարբերութեամբ կը պատասխանէր, և վաճառատան գործը կը շարունակէր ճիշտ առաջուան պէս:

Բայց զիտէ՞ք ինչ տեսակ մարդ էր Սքուրճ. չափազանց կծծի, սակաւահեաց, խնայող, ազահ, վերջին տատիճան կարծրասիրտ: Իր գործերուն մէջ խիստ զաղտնի ու միւսակ, իր մէջի պազութիւնը կարծես թէ կը սառեցնէր իր դէմքը. կը թորմեցնէր ցցուած քիթը, կը պրկէր երեսները, կը ծանրացնէր քալուածքը, կը կարմրեցնէր աչքերը, կը կապուեցնէր շրթունքը: Տեսնելու էր զինքը երբ պատահմամբ իրմէ դրամուզողի մը դէմն ելլէր. իր ամբողջ գիմագիծը կ'այլակերպէր, և ճաթած պղինձեղէնի ծայնով մը անհասկնալի բառեր մը կը քրթմնէր: Սառեցնող բան ո՞րն էր գլխուն, կոպերու և մազոտ կզակին վերայ, ուր որ երթար իր հետ սառնութիւն մը կը տանէր, ամէն բան կը սառեցնէր: Գործի օրերը իր գործատունը միշտ պաղ էր, Ծնունդի օրերն ալ ոչ աւելի ոչ պակաս, միշտ նոյնը:

* *

Ատենօք—տարուան ամէնէն դեղեցիկ օրերէն մին—Ծնունդի իրիկուն մը, ծերունի Սքուրճ նստած էր իր վաճառատան մէջ, ու չափազանց զբաղեալ, իր դրամը կը համբար: Օղջ շատ ցուրտ էր դուրսը մառախուղ մը պատած իր ամէն կողմ. փողոցէն անդոյններով ծայնները կը լսուէին, անմղովէ ցտանք իրենց շունչերով ձեռքերնին սաքցնել կը ջանային, ուրիշներ, օտարներն փողոցին սալաշատակին չարնելով կը քալէին, տաքնալու համար: Քաղաքին մեծ ժամացոյցը դեռ նոր երեքը գարկած էր, բայց արդէն մութը կոխած էր—այդ օրը ամբողջ ցօրեկն ալ բաւականաչափ լոյս

եղած չէր—ու այս պահուն դրացի վաճառատուններուն մէջ ճրագի լոյսեր կը պլպլային: Փողոցին մառախուղը ամէն ճեղքերէ ու բանալիի ծակերէ ներս կը մտնէր, ու թէև փողոցը նեղ էր, սակայն և այնպէս գիմացի տուներու ուրուադիմները հազիւ կը տեսնուէին: Բնութիւնը իր ամէնէն ցուրտ ու տխուր տրամադրութեան մէջն էր:

(Շարունակելի) (1)

ՆՈՐ ԳԻՐԲ ՄԸ

ԱԼԼԱՀԱ ՆԷՋՐ ՕԼՄԷՇ ՊԻՐ ԷՎԼԱՏ,
կամ «Պետրիոս Պետոս Յիսուսը նա՞սրլ պուլար»:

Այս կենսագրութեան հեղինակն է Տիկ. Ռահէլ Ս. Մկրտիչեան, քոյրը կենսագրեալին: Գրչին գիրն է կէս մէճիւր, ստանալու համար գիմել հեղինակին, Հալէպ, Սուրիա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

Պատգեհի Ժողովին վերջ

ՅՕԴՈՒՄՆԵՐ

Ամուսնական Սեր ԹԻԳՄ. Վ. ՊԷԿԱՆ

Կրօնք Մարդուն Սնհրամէճս և

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Առաջակ Վեր ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

Ս. Գ. Լուսաւորից ՌԵՏՈՒՆԻ

Ինչպէ՞ս քարոզելու ԹՐԳ. Տ. Ճ. Խ.

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԳԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Արտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
Տնօրէն-խմբագիր Տ. Ճ. Խրլորեան
Տարեկան բաժնեկիր— Սուրիա, 1.50
Սուր. օսկի. արտասահման՝ 1.50 տոլար:
Հասցէ—

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE